Իրավական կարծիք Հանրային քննարկումների նոր կարգի վերաբերյալ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ուսումնասիրելով ՀՀ արդարադատության նախարարության հեղինակած «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը, ներկայացնում է առաջարկություններ վերոնշյալ նախագծի վերաբերյալ:

Այսպես, Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են հանրային քննարկման ներկայացվել միայն համապատասխան գերատեսչական մարմնի որոշմամբ: Ինչպես ցույց է տվել հայաստանյան իրավակիրառ պրակտիկան՝ ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, իրենց կարևորությամբ չեն զիջում իրավական ակտերին: Ուստի առաջարկում ենք, որ պետական մարմինները պետք է ունենան ոչ թե հայեցողական լիազորություն, այլ օրենսդրական պարտավորություն՝ ենթաօրենսդրական ակտերը ներկայացնելու պարտադիր հանրային քննարկման:

Հարկ է նշել, որ Կարգը առաջարկությունները մերժելու դեպքում չի նախատեսում նորմ, որը կպարտավորեցնի համապատասխան մարմնին ներկայացնելու մերժումը հիմնավորող փաստարկներ: Եվ այս պարագայում չի բացառվում, որ փաստարկված առաջարկությունները կմերժվեն առանց իրավական հիմնավորվածության: Ուստի առաջարկում ենք քննարկվող Կարգով նախատեսել դրույթ, ըստ որի՝ իրավական ակտի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները մերժվելու դեպքում՝ նախագծի հեղինակները պետք է ներկայացնեն մերժման հիմնավորումները:

Սույն կարգի մեջ բացակայում է հանրային քննարկումներ իրականացնելու օրինակելի ձևաչափը: Օրինակ՝ նախարարը կարող է նախարարին կից գործող հասարակական խորհրդի հետ քննարկում իրականացնել և այնուհետև ներկայացնել, որ իրականացվել է հանրային քննարկում: Այս դեպքում, այն անձիք և հասարակական կազմակերպությունները, ովքեր չեն հանդիսանում հասարակական խորհրդի անդամ, սակայն ունեն մեծ հետաքրքրություն և մասնագիտական փորձառություն իրավական ակտի նախագծով կարգավորվող հարցերում, հնարավորություն չեն ունենա մասնակցել հանրային քննարկումներին: Ուստի առաջարկում ենք սահմանել օրինակելի ձևաչափ՝ հանրային քննարկում կազմակերպելու և իրականացնելու համար:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ Միջազգային պայմանագրերի վավերացման մասին օրենքի նախագծերը ենթական չեն հանրային քննարկման: Նմանատիպ պայմանագրերը պարտավորություն են առաջացնում, ոչ միայն պետության այլ նաև քաղաքացիների համար: Ուստի հանրությունը պետք է ակտիվ կերպով ներգրավված լինի այս գործընթացին: Ուստի

առաջարկում ենք հանրային քննարկման ներկայացնել նաև միջազգային պայմանագրերի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծերը։

Կարգի մեջ սահմանված 15 օրյա ժամկետի սկզբունքը նույնպես խիստ անորոշ է: Ե՞րբ է այն սկսվում. e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվելուց հետո՞, թե՞ առաջ: Հետևաբար կարծում ենք, որ հստակ կարգավորումներ են անհրաժեշտ 15 օրյա ժամկետի սկիզբը և ավարտը սահմանելու համար: Բացի այդ, պարզ չէ, թե ինչո՞ւ է սահմանվում 15 օրյա առավելագույն ժամկետ բոլոր իրավական ակտերի դեպքում: Առաջարկում ենք, բացառել հանրային քննարկումների առավելագույն ժամկետի սահմանումը՝ հնարավորություն տալով իրենց կարևորությամբ և ծավալով ընդգրկուն իրավական ակտերը հանրային քննարկման ներկայացնել ավելի երկար՝ ողջամիտ ժամկետներում:

Սույն կարգը քննարկումները պարտադիր է դարձնում միայն e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում, առանց աշխատանքային հանդիպումների մասին վկայակոչելու: Հայտնի չէ, թե արդյոք լիազոր մարմինը հայեցողություն ունի՞ նշանակելու աշխատանքային հանդիպումներ շահագրգիռ ֆիզիկական անձանց և հասարակական կազմակերպությունների հետ, թե՞ ոչ: Իրավաբանների հայկական ասոցիացիայի պրակտիկան ցույց է տվել, որ աշխատանքային հանդիպումները մեծացնում են առաջարկությունների ընդունման հավանականությունը, քանի որ առաջարկություններ ներկայացնողը հնարավորություն է ունենում փաստացի ներկայացնել իր մտահոգությունները և առաջարկությունները, ինչպես նաև քննարկումներ ծավալել դրանց շուրջ: Վերջինս շատ հաճախ հանգեցնում է նաև օրենսդրական բարեփոխումներ սկսելու գործընթացին: Առաջարկում ենք, հանրային քննարկումների անցկացման այլ ձևաչափեր նույնպես նախատեսել:

Կարգի մեջ կարգավորված չէ նաև այն հարցը, որ եթե նորմատիվ իրավական ակտը հանրային քննարկում չի անցնում, կարող է արդյո՞ք հիշյալ ակտի նախագիծը հետ կանչվել Կառավարությունից կամ Ազգային ժողովից, թե՞ ոչ: Սա հնարավորություն է տալիս մշակող մարմնին հրատապ կերպով մշակել իրավական ակտերի նախագծեր և առանց հանրային քննարկումների կազմակերպման ընդունել դրանք: Օրինակ՝ հիշյալ իրավական ակտերի նախագծում կարող են նշում անել այն մասին, որ տվյալ իրավական ակտը հրատապ ընդունման անհրաժեշտություն ունի, այդ կերպ խուսափելով հանրային քննարկումներից: Հետևաբար առաջարկում ենք Կարգը դրույթներ սահմանի այն մասին, որ հանրային քննարկումներ չանցած նորմատիվ իրավական ակտերը չեն կարող ներկայացվել Ազգային ժողովին կամ Կառավարությանը: